ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 26

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Ք. Երևան

«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ նիստ) կայացավ 2022թ. մայիսի 20-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

<u>Նիստին մասնակցում էին՝</u>

<u>Կոմիտեի անդամներ</u>

Կարեն Հովհաննիսյան	Կոմիտեի նախագահ
Բաբկեն Ղալոյան	Կոմիտեի անդամ
Տիգրան Իսրաելյան	Կոմիտեի անդամ
Արման Ալաբերքյան	Կոմիտեի անդամ
Հայկուհի Ռշտունի	Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 5-ը, հետևաբար, ղեկավարվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 համաձայն Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի անդամ, քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածի 4.01, 4.02 կետերով, 5-րդ հոդվածի 5.01 կետով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածի 21.04 կետով, 28-րդ հոդվածի 28.01 կետով, օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումները.

1. **07.05.2022թ. «Արարատ-Արմենիա-06»-«Շիրակ-06» (16A-059) հանդիպման ժամանակ, «Շիրակ-06» թիմի ֆուտբոլիստ Միքայել Հարությունի Ազոյանի (31717) կողմից ոչ սպորտային վարքագիծ դրսևորելու վերաբերյալ (վիրավորանք):**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Շիրակ-06» թիմի ֆուտբոլիստ Միքայել Հարությունի Ազոյանի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 17-րդ կետը՝ «Շիրակ-06» թիմի ֆուտբոլիստ Միքայել Հարությունի Ազոյանին (31717) որակազրկել 2 խաղով և «Շիրակ» Ֆուտբոլային ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5,000 ՀՀ դրամի չափով:

2. **08-05-2022թ. «Նոա-2-04»-«Բերդավան-04» (18B-059) հանդիպման ժամանակ, «Բերդավան-04» թիմի ֆուտբոլիստ Թաթուլ Ավետիքի Մուղդուսյանի (30254) կողմից բռնարարք կատարելու վերաբերյալ:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

Հաստատված համարել «Բերդավան-04» թիմի ֆուտբոլիստ Թաթուլ Ավետիքի Մուղդուսյանի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 15-րդ կետը՝ «Բերդավան-04» թիմի ֆուտբոլիստ Թաթուլ Ավետիքի Մուղդուսյանին (30254) որակազրկել 2 խաղով և Բերդավանի «Գեղագիտական կենտրոն» ՀՈԱԿ ակումբին-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5000 ՀՀ դրամի չափով:

3. **08-05-2022թ. «Նոա-2-04»-«Բերդավան-04» (18B-059) խաղը սկսվել էր 20 րոպե ուշացումով՝ Բերդավան-04 թիմի ուշանալու պատճառով:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

Հաստատված համարել «Բերդավան-04» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 34-րդ կետը՝ Բերդավանի «Գեղագիտական կենտրոն» ՀՈԱԿ ակումբի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց հայտարարել «Նկատողություն»:

4. **03-05-2022թ. «Արարատ-Արմենիա»-«Նորավանք» (ՊԼ-151) հանդիպման ժամանակ «Արարատ-Արմենիա» թիմի երկրպագուների կողմից ճայթրուկներ պայթեցնելու և մի քանի ֆուտբոլիստների մարզաշապիկների վրա VBET Պրեմիեր լիգայի նշանը առկա չլինելու վերաբերյալ:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

1) Հաստատված համարել «Արարատ-Արմենիա» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ

կետը՝ «Արարատ-Արմենիա ֆուտբոլային ակումբ» ԲԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100.000 ՀՀ դրամի չափով։

2) Հաստատված համարել «Արարատ-Արմենիա» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 72-րդ կետը՝ «Արարատ-Արմենիա ֆուտբոլային ակումբ» ԲԲԸ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց հայտարարել «Նկատողություն» և տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20.000 ՀՀ դրամի չափով։

5. **05-05-2022թ. «ԲԿՄԱ»-«Վան» (ՊԼ-153) հանդիպման ժամանակ ոստիկանության բացակայության վերաբերյալ։**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «ԲԿՄԱ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 39-րդ կետը՝ «ՀՀ ՊՆ Վ.Սարգսյան» անվան ռազմական համալսարանի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց հայտարարել «Նկատողություն»։

6. **06-05-2022թ. «Շիրակ» «ԲԿՄԱ-2» (ԱԽ-060) հանդիպման ժամանակ, տեղի ունեցած իրադարձության հիման վրա։**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Շիրակ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը (No 43-ի տակ հանդես եկող խաղացողի շապիկին չկար ազգանուն և ոստիկանության ներկայացուցիչների ուշացման պատճառով նախախաղային խորհրդակցությունը սկսել է մոտ 15 րոպե ուշացումով) և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 72-րդ և 40-րդ կետերը՝ «Շիրակ» Ֆուտբոլաին ակումբի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց հայտարարել «Նկատողություն»։

2) Հաստատված համարել «Շիրակ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը (մարզադաշտի ցուցատախտակը կրկին չէր աշխատում) և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 81-րդ կետը՝ «Շիրակ» Ֆուտբոլաին ակումբի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց հայտարարել «Նկատողություն» և տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20.000 ՀՀ դրամի չափով։

3) Հաստատված համարել «ԲԿՄԱ-2» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը (հյուր թիմի ներկայացուցիչների ուշացման պատճառով նախախաղային խորհրդակցությունը սկսել է մոտ 15 րոպե ուշացումով) և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 40-րդ կետը՝ «ՀՀ ՊՆ Վ.Սարգսյան» անվան ռազմական համալսարանի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց հայտարարել «Նկատողություն»:

7. **25-04-2022թ. «Փյունիկ»-«Նորավանք» (ՊԼ-141) հանդիպման ժամանակ, Արևմտյան տրիբունայի 2 մուտքերց մեկի մոտ անվտանգության աշխատակիցների բացակայության վերաբերյալ:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

Հաստատված համարել «Փյունիկ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 39-րդ կետը՝ «Փյունիկ ՖԱ ՀԿ»-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց հայտարարել «Նկատողություն» և տուգանել նվազագույն աշխատավարձի երեսունապատիկի՝ մինչև 30.000 ՀՀ դրամի չափով:

8. **2022/23 մրցաշրջանի ՀՖՖ Ակումբների արտոնագրման և վերահսկողության գործընթացին մասնակցող, Ազգային արտոնագրի թեկնածու «Շիրակ ՖԱ» ակումբը չի բավարարել Կանոնակարգի Հոդված 19-ով սահմանված չափանիշը:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

Հաստատված համարել «Շիրակ ՖԱ» ակումբի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 42-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «Շիրակ ՖԱ» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի՝ 2.000.000 ՀՀ դրամի չափով:

9. **2022/23 մրցաշրջանի ՀՖՖ Ակումբների արտոնագրման և վերահսկողության գործընթացին մասնակցող, Ազգային արտոնագրի թեկնածու «Փյունիկ ՖԱ ՀԿ» ակումբը չի բավարարել Կանոնակարգի Հոդված 19-ով սահմանված չափանիշը:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

Հաստատված համարել «Փյունիկ ՖԱ ՀԿ»-ի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 42-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «Փյունիկ ՖԱ ՀԿ»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի՝ 2.000.000 ՀՀ դրամի չափով։

10. **2022/23 մրցաշրջանի ՀՖՖ Ակումբների արտոնագրման և վերահսկողության գործընթացին մասնակցող, Ազգային արտոնագրի թեկնածու «ՖԱ Ուրարտու» ակումբը չի բավարարել Կանոնակարգի Հոդված 19-ով սահմանված չափանիշը։**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

Հաստատված համարել «ՖԱ Ուրարտու»-ի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 42-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «ՖԱ Ուրարտու»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի՝ 2.000.000 ՀՀ դրամի չափով։

11. **2022/23 մրցաշրջանի ՀՖՖ Ակումբների արտոնագրման և վերահսկողության գործընթացին մասնակցող, Ազգային արտոնագրի թեկնածու «Նոա ՖԱ ՀԿ» ակումբը չի բավարարել Կանոնակարգի Հոդված 19-ով սահմանված չափանիշը։**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

Հաստատված համարել «Նոա ՖԱ ՀԿ»-ի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 42-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «Նոա ՖԱ ՀԿ»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի՝ 2.000.000 ՀՀ դրամի չափով։

12. **2022/23 մրցաշրջանի ՀՖՖ Ակումբների արտոնագրման և վերահսկողության գործընթացին մասնակցող, Ազգային արտոնագրի թեկնածու «Արարատ ՖԱ» ակումբը չի բավարարել Կանոնակարգի Հոդված 19-ով սահմանված չափանիշը։**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

Հաստատված համարել ««Արարատ ՖԱ»-ի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 42-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «Արարատ ՖԱ»-ին

տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի՝ 2.000.000 ՀՀ դրամի չափով։

13. **2022/23 մրցաշրջանի ՀՖՖ Ակումբների արտոնագրման և վերահսկողության գործընթացին մասնակցող, Ազգային արտոնագրի թեկնածու «Նորավանք ՍԱ ՍՊԸ» ակումբը չի բավարարել Կանոնակարգի Հոդված 19-ով սահմանված չափանիշը։**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

Հաստատված համարել «Նորավանք ՍԱ» ՍՊԸ-ին կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 42-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «Նորավանք ՍԱ» ՍՊԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի՝ 2.000.000 ՀՀ դրամի չափով։

14. **08-05-2022թ. «Նորավանք»-«Ուրարտու» (ԳԽ-011) հանդիպման ժամանակ տեղի ունեցած միջադեպի, ինչպես նաև երկու թիմերի երկրպագուների կողմից պայթուցիկ հրավառություններ, ճայթրուկներ պայթեցնելու և մրցավարների ուղղությամբ խաղադաշտ իրեր նետելու վերաբերյալ։**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

1) Հաստատված համարել «Նորավանք» թիմի երկրպագուների կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 23-րդ կետը՝ «Նորավանք ՍԱ» ՍՊԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200.000 ՀՀ դրամի չափով։

2) Հաստատված համարել «Նորավանք» թիմի երկրպագուների կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետը՝ «Նորավանք ՍԱ» ՍՊԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի ՝հարյուրապատիկի՝ 100.000 ՀՀ դրամի չափով։

3) Հաստատված համարել «Ուրարտու» թիմի երկրպագուների կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 23-րդ կետը՝ «ՖԱ Ուրարտու»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200.000 ՀՀ դրամի չափով։

4) Հաստատված համարել «Ուրարտու» թիմի երկրպագուների կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետը՝ ՝ «ՖԱ Ուրարտու»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի՝հարյուրապատիկի՝ 100.000 ՀՀ դրամի չափով։

15. 14-04-2022թ. «Օնոր Ակադեմիա-09»-«Միսիան-09» (13Մ2-037) խաղը մնացել է անավարտ՝ բժշկի խաղադաշտի սահմաններից բացակայելու պատճառով։

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

Հաստատված համարել «Օնոր Ակադեմիա-09» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 21-րդ կետը՝ «Օնոր Ակադեմիա-09» թիմի նկատմամբ կիրառել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով և «Օնոր ՍՊԸ»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երեսունապատիկի՝ 30.000 ՀՀ դրամի չափով։

16. 05-05-2022թ. «Դովեղ-09»-«Էրեբունի-09» (13Մ1-051) խաղադաշտը պատրաստ չլինելու պատճառով հանդիպումը չկայանալու վերաբերյալ։

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

Հաստատված համարել «Դովեղ-09» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 21-րդ կետը՝ «Դովեղ-09» թիմի նկատմամբ կիրառել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով և «Դովեղ ՖԱ ՀԿ»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երեսունապատիկի՝ 30.000 ՀՀ դրամի չափով։

17. 15-05-2022թ. «Դիաղին-09»-«Վեստ Արմենիա-09» (13Մ4-036) խաղը տեղի չունեցավ «Վեստ Արմենիա-09» թիմի խաղին չներկայանալու պատճառով։

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

Հաստատված համարել «Վեստ Արմենիա-09» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 5րդ կետը՝ «Վեստ Արմենիա-09» թիմի նկատմամբ կիրառել տեխնիկական պարտություն 0:3

հաշվով և «ՖԱ Վեստ Արմենիա» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10.000 ՀՀ դրամի չափով:

18. **14-05-2022թ. «Արարատ-Արմենիա»-«Վան» (ՊԼ-162) հանդիպման ժամանակ «Վան» թիմի մարզիչ Սևադա Արզումանյանի կողմից ոչ սպորտային վարքագիծ դրսևորելու վերաբերյալ:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

Հաստատված համարել «Վան» թիմի մարզիչ Սևադա Արզումանյանի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 37-րդ կետը՝ «Վան» թիմի մարզիչ Սևադա Արզումանյանին զրկել իր ծառայողական պարտականությունները կատարելու իրավունքից մինչև 2022թ-ի հունիսի 30-ը ներառյալ և «ՖԱ Վան ՀԿ»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100.000 ՀՀ դրամի չափով:

<u>Հիշեցում՝</u>

1. **Հոդված 19. Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկումը**

Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումները ֆուտբոլային սուբյեկտների կողմից կարող են բողոքարկվել ՀՖՖ Բողոքարկման կոմիտե՝ որոշման մասին պաշտոնական հրապարակման պահից 7 (յոթ) օրվա ընթացքում, իսկ այդ դեպքում, երբ ֆուտբոլային սուբյեկտը դիմել է գործի հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 7-օրյա ժամկետը սկսում է հոսել այդ հիմքերը ստանալու պահից:

2. **Հոդված 28. Պատասխանատվության միջոցի կիրառման ընդհանուր սկզբունքները**

28.05 Սույն կանոնակարգում ներառված՝ ֆուտբոլիստի և/կամ թիմի անձնակազմի անդամի ստացած դեղին քարտերի հետ կապված որակազրկումները (սույն
կանոնակարգի 41- րդ, 45-րդ, 47-րդ և 49-րդ հոդվածների 1-ից 13-րդ կետերը) կիրառվում են առանց ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշման:

3. **Հոդված 25. Ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի և ակումբի պաշտոնյաների պատասխանատվությունը**

25.20 Ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի, ակումբի պաշտոնյայի սույն կանոնակարգի 41-րդ, 45-րդ, 47-րդ և 49-րդ հոդվածների 1-ից 13-րդ կետերով սահմանված խախտումների հաշվառումը կատարում է համապատասխան ակումբը՝ առանց ՀՖՖ-ի Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշման:

25.21 25.20 կետի պահանջները ակումբի կողմից չպահպանելը հանգեցնում է այդ ակումբի նկատմամաբ կարգապահական պատժամիջոցի՝ տեխնիկական պարտություն:

Հոդված 44-ի և 45-ի կիրառվող պատժամիջոցների տուգանքները սահմանված են ՀՀ Մ-18-16 առաջնություններին մասնակցող ֆուտբոլիստների համար: Մ-15 և ցածր տարիքային խմբերի առաջնություններին մասնակցող ֆուտբոլիստների տուգանքները և պատժամիջոցները սահմանված են նախորդի 50%-ի չափով: Հոդված 44-ի և 45-ի կիրառվող պատժամիջոցները սահմանվում են նաև ՀՀ Սիրողական ֆուտբոլի առաջնություններին մասնակցող սուբյեկտների համար: